**Արձանագրություն N 2**

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/4-Լ) ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 մարտի 2019 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ն. Մնոյանը
անդամներ՝ Մ. Սիմոնյանը, Դ. Շատվերյանը, Տ. Մալխասյանը, Դ. Հարությունյանը
քարտուղար՝ Լ. Հարությունյանը

## I. Հայտերի բացման մասին

------------------------------------------------------------------------

(Ն. Մնոյան)

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված։

| Չափաբաժնի համարը | Գնվելիք աշխատանքի | | Հայտ ներկայացրած մասնակիցների | | |
|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Ծառայության առավելագույն գինը | Անվանումը | Գնային առաջարկը (առանց ԱԱՀ) | Գնային առաջարկը (ԱԱՀ-ն ներառյալ) |
| 1. | Էլեկտրականության բաշխման սարքերի տեղադրման ծառայություններ | **700 000** | «Զ և Գ Տելեմատիկ» ՍՊԸ* | 1 087 218 | 1 087 218 |
| | | | «Էներգովեստ» ՍՊԸ | 696 000 | 835 200 |
| | | | ԱՁ Մեսրոպ Աղազարյան | 670 000 | 670 000 |
| | | | «Քարամյանշին» ՍՊԸ | 567 450 | 680 940 |
| | | | ԱՁ Գրիգոր Այվազյան | 700 000 | 700 000 |

***մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

22.03.2019թ.-ի ժ 11:00-ին հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանը ներկայացրեց բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատեց իրեն ներկայացված հայտերի ցուցակը:

Հայտերի վերաբերյալ պարզաբանումներ չեն ստացվել:

**II. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

(Ն. Մնոյան)

1. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/4-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել ԱՁ Մեսրոպ Աղազարյանին:

բ) Հիմք ընդունելով Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետը և 41-րդ կետը, մերժել «Քարամյանշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

գ) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալները՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

դ) Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________ Ն. Մնոյան

անդամներ՝ ____________ Մ. Սիմոնյան

____________ Դ. Շատվերյան

____________ Տ. Մալխասյան

____________ Դ. Հարությունյան

քարտուղար՝ ____________ Լ. Հարությունյան